

Բ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
FOLKLORE STUDIES  
Ф О Л Ъ К Л О Р И С Т И К А

ՀՏԴ՝ 930.85

DOI: 10.52971/18294316-2024.27.2-141

ԳՅՈՒՄՐՈՒ ԲԱՆԱԿՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ  
(1983-1993 թթ. գրառված բանահյուսական նյութերի հիման վրա)

*Կարինե Ա. Սահակյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,  
Շիրակի պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

*Ռոզա Պ. Հովհաննիսյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, ՀՀ

**Ամփոփում**

Նախաբան. Հոդվածը նվիրված է Գյումրու բանավոր ժառանգության՝ մեր կողմից գրառված բանահյուսության բազմաժանր նյութերի ընդհանուր քննությանը: Առավելապես անդրադարձել ենք բանահյուսական այն ժանրերին, որ ակտիվ կենցաղավարում են Գյումրիում և այժմ են ընկնում ինքնատիպ դրսևորումներով ու տարածաշրջանի առանձնահատկություններով: Մեթոդներ և նյութեր: Օգտագործել ենք պատմահամեմատական, վերլուծական և համադրական մեթոդներ՝ ընդգրկելով տպագիր և անտիպ բանահյուսական նյութ՝ ժանրային տարբեր դրսևորումներով: Դաշտային բանահյուսական նյութերը բացառապես գրի ենք առել Գյումրու հնաբնակներից՝ անմիջական կրողներից և կենդանի, խոսուն վկաններից, որոնք ներգաղթել են Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից: Փորձել ենք փրկել բանահյուսական անկրկնելի դրոշմ ունեցող նշխարները, որոնք անաղարտ են և չմիջնորդված: Հոդվածում վկայաբերվող բանահյուսական նմուշները պահվում են Կարինե Սահակյանի անձնական հավաքածուում: Վերլուծություն. Գյումրու բանավոր ժառանգությունը քննել ենք բանագիտական և մասամբ հոգելեզվաբանական դիտանկյուններով՝ էթնոմշակութային զարգացման համապատկերում: Արդյունքներ. 1983-93 թթ. Գյումրիում գրառված բանահյուսական նմուշների կառուցվածքին, խոսքի պատկերավորության հնարներին ու միջոցներին, խոսքարվեստի խնդիրներին անդրադարձր վկայում է գյումրեցու լեզվամտածողության

ինքնատիպությունն ու բանաձևային լինելը, խոսքը շնչավորելու և պատումի մեջ դնելու նրա վարպետությունը: Հեղինակների ներդրումը. Կ. Սահակյանը գրառել ու համակարգել է Գյումրու բանահյուսական նյութը, կատարել է էթնոհոգեբանական ուսումնասիրություն՝ պարզելու համար, թե Գյումրու բանավոր ժառանգության մեջ ո՞ր ժանրերն են կենսունակ, և թե որքան՞վ են կենցաղավարում ասույթային բանաձևերը այս կամ այն իրավիճակում: Ռ. Հովհաննիսյանը անդրադարձել է հոդվածի լեզվաաձևական խնդիրներին և աղբյուրագիտական գրականությանը:

**Բանալի բառեր՝** բանավոր ժառանգություն, ասույթաբանություն, տեղական գրույցներ, զվարճապատում, առած-ասացված, օրհնանք, անեծք, բարեմաղթանք, դարձվածք, երդում, հմայական աղոթք:

**Ինչպես հղել՝** Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ. Գյումրու բանավոր ժառանգության վերլուծության փորձ (1983-1993 թթ. գրառված բանահյուսական նյութի հիման վրա) // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 2 (27): 141-158 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-141

## AN ATTEMPT TO ANALYZE ORAL HERITAGE OF GYUMRI (based on folklore materials recorded in 1983-1993)

*Karine A. Sahakyan*

Shirak Center for Armenological Studies of NAS,  
Shirak State University after M. Nalbandyan, Gyumri, RA

*Roza P. Hovhannisyan*

Shirak Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA

### Abstract

**Introduction:** The article is dedicated to the general examination of the oral heritage of Gyumri, the multi-genre folklore materials recorded by us. We mostly referred to the folklore genres that actively live in Gyumri and stand out for their unique manifestations and regional features. Field ethnographic materials are exclusively written by the ancient inhabitants of Gyumri, direct bearers and eloquent witnesses who immigrated from various provinces of Western Armenia. We have tried to save the unrepeatable folklore marks, which are pristine and unmediated. The folklore samples referred to in the article are stored in our /K.S./s/ personal collection. **Methods and materials:** We used historical-comparative, analytical and comparative methods, including printed and non-typed folklore material written by us, with different genre manifestations. **Analysis:** We have examined the oral heritage of Gyumri with scientific and partially psycholinguistic perspectives in the context of ethno-cultural development. **Results:** The reference to the structure of folklore samples recorded in Gyumri in 1983-93, the techniques and means of speech imagery, and the problems of speech art proves the originality and formulaic nature of Gyumri's language thinking, his mastery of breathing speech and putting it into a story. **Authors' Contribution:** K. Sahakyan recorded and systematized the folklore material of Gyumri, conducted an ethno-psychological study in order to find out which genres are viable in the oral heritage of Gyumri, and to what extent the proverbial formulas are used in this or that situation. R. Hovhannisyan referred to the linguistic and stylistic problems of the article and the source literature.

**Key words:** *oral heritage, proverbs, local conversations, entertainment, proverb, blessing, curse, wish, phrase, oath, incantation prayer.*

**Citation:** Sahakyan K., Hovhannisyan R. *An Attempt to Analyze the Oral Heritage of Gyumri (on the basis of folklore material written in 1983-1993)* // "Scientific works" SCAS HAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 141-158 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.2-141

## ПОПЫТКА АНАЛИЗА УСТНОГО НАСЛЕДИЯ ГЮМРИ (по фольклорным материалам, записанным в 1983-1993 гг.)

**Карине А. Саакян**

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри,  
Ширакский государственный университет, Гюмри, РА

**Роза П. Оганесян**

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

### Аннотация

**Введение:** Статья посвящена общему рассмотрению устного наследия Гюмри, зафиксированных нами разножанровых фольклорных материалов. В основном мы говорили о фольклорных жанрах, которые действуют в Гюмри и выделяются своими уникальными проявлениями и региональными особенностями. Полевые этнографические материалы написаны исключительно от древних жителей Гюмри - непосредственных носителей и живых красноречивых свидетелей, иммигрировавших из различных провинций Западной Армении. Мы постарались сохранить неповторимые следы фольклора, которые являются первозданными и непосредственными. Образцы фольклора, упомянутые в статье, хранятся в нашей личной коллекции /К.С./. **Методы и материалы:** Мы использовали историко-сравнительный, аналитический и сопоставительный методы, в том числе написанный нами печатный и немашинописный фольклорный материал, имеющий различные жанровые проявления. **Анализ:** Мы рассмотрели устное наследие Гюмри с научной и частично психолингвистической точки зрения в контексте этнокультурного развития. **Результаты:** Обращение к структуре зафиксированных в Гюмри в 1983-93 гг. образцов фольклора, приемам и средствам речевой образности, проблемам речевого искусства доказывает своеобразие и шаблонность языкового мышления гюмрийца, его мастерство дыхания речи и воплощения ее в рассказе. **Вклад авторов:** К. Саакян зафиксировала и систематизировала фольклорный материал Гюмри, провела этнопсихологическое исследование с целью выяснить, какие жанры жизнеспособны в устном наследии Гюмри, и в какой степени пословичные формулы используются в той или иной ситуации. Р. Оганесян коснулась лингвистических и стилистических проблем статьи и исходной литературы.

**Ключевые слова:** *устное наследие, пословицы, местные разговоры, увеселение, пословица, благословение, проклятие, пожелание, фраза, клятва, заклинательная молитва.*

**Как цитировать:** Саакян К., Оганесян Р. *Попытка анализа устного наследия Гюмри (на основе фольклорного материала, написанного в 1983-1993 годах)* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2 (27). 141-158 сс.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-141

**ՆԱԽԱԲԱՆ.** Գյումրու մերօրյա բանավոր բանահյուսության առանձնահատկություններից են՝ աղետով բեկված ասք, բանավոր պատումների թեմատիկ, մոտիվացիոն և տեքստային փոփոխություններ՝ լեզվամտածողության նոր դրսևորումներով:

Բանահյուսական ժառանգության համակարգումը և ուսումնասիրումը հայ բանագիտության առաջ ծառայած կարևոր խնդիրներից են, քանի որ բանահյուսական ժառանգությունն ընդգրկում է հնագույն ժամանակներից ցայսօր գոյատևող ժողովրդական խոսքարվեստի բոլոր դրսևորումները, որ սերնդից սերունդ պահպանվել են ժողովրդի բանավոր ավանդույթի մեջ [4, էջ 10]:

Առհասարակ, Գյումրիում գրառված բանահյուսական նմուշներն առանձնաձևում են ինքնատիպությամբ, բառուբանով, բանավոր երգաստեղծության ու պատմելաճի առանձնահատկություններով, կենցաղի, սովորույթների ու հավատալիքների տեղական դրսևորումներով: Բացահայտել ենք այն բանաձևային արտահայտություններն ու ավանդական խոսքային բանաձևերը, որոնք առկա են մեր կողմից քննվող բանահյուսության նմուշներում՝ ցույց տալով Գարնո բարբառը կրողների աշխարհընկալման յուրօրինակությունը, մտքի կենսունակությունը, բանավոր մշակութային ժառանգության արժեքի պային բնույթն ու նախնական ձևերը, որոնք, որոշակի փոփոխություններով սերնդեսերունդ փոխանցվելով, հզորացնում են մեր ինքնությունը:

Մեր նպատակն է ժողովրդական բանավոր մշակույթի, բանահյուսական ժառանգության ու երգաստեղծության պահպանմամբ ու զարգացմամբ ստեղծել մշակութային հաղորդակցման հնարավորություն՝ նոր սերնդի մեջ դրական վերաբերմունք ձևավորելով ավանդական արժեքների հանդեպ և նպաստելով ավանդույթների փոխանցմանը:

Ստեղծել Շիրակի, մասնավորապես՝ Գյումրու բանահյուսական ժառանգության ամփոփ պատկերը, ի մասնավորի **վիպական, քնարական և ասույթաբանական ժանրերը**, որոնք ազգային հոգեկերտվածքը, բնավորությունը յուրաքանչյուր նոր սերնդի մեջ կներկայացնեն սոցիալական փորձի պահպանման, փոխանցման, վերարտադրության և ամրապնդման մեխանիզմներով:

#### **Գյումրու վիպական բանահյուսությունը**

Այն առավելապես արտահայտվում է բանավոր երգաստեղծության հետևյալ ժանրերում՝ տեղական գրույցներ, երգիծական մանրապատումներ, զվարճախոսություն, առակներ, մականուններ՝ ստեղծման պատմությամբ, առած-ասացվածքներ, կշտամբանքի խոսքեր և այլն: Գյումրիում բանահյուսական տեքստը գերազանցապես դրսևորվում է ծեսի, սովորույթի ու ավանդույթի համատեքստում՝ պատումի տարաբնույթ ձևերով ու ազգաբանական շերտերի ընդգրկմամբ: Գյումրու վիպական բանահյուսության նմուշների քննությամբ կարելի է հավաստել, որ Գյումրի քաղաքն իր հոգևոր ծննդաբանության ու լեզվամտածողության մեջ ամփոփում է Ալաշկերտից, Ներքին Բասենից, Գարինից ու Գարսից վերաբնակեցվածների քաղաքային տիպի բանահյուսությունը, որում առկա են հանկարծաստեղծության տարրն ու հորինման վարպետությունը:

#### **Տեղական գրույցներ**

Գյումրի-Ալեքսանդրապոլի նշանավոր գերդաստանների մասին տեղական գրույցները վկայում են, որ Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից գաղթած գերդաս-

տանները դարձել են քաղաքի պատմության կերտողներ: Գյումրիում ավանդականացման գործընթացը իրականացվում էր առավելապես արհեստների ու արհեստավորական ավանդույթների ժառանգորդման սկզբունքով: Քաղաքի պատմական հիշողության մեջ շարունակաբար հոլովվում են երևելի տոհմերի ու գերդաստանների, ինչպես նաև այս կամ այն արհեստի ու արհեստավորական ավանդույթի մասին տեղական գրույցներ ու պատումներ, թեև արհեստը արխիվացված է և այսօր չի կենցաղավարում:

Կան տեղական գրույցներ, որոնք ժամանակի հոլովույթում ստացել են դարձվածքային արժեք՝ վկայաբերվելով իբրև վերաիմաստավորված արտահայտություն, ինչպես՝ *Քոչակենց քյամարը*: Քոչակենք վեց ախպեր էին. վեց ախպերով մե չքնաղ քյամարը՝ մ ունեին: Ամեն մեկը փորձում էր առավոտ մյուսներից ավելի վաղ արթնանալ, որ այդ օրն ինքը վայելեր արծաթե գոտու հմայքը: Գուցե հմայքի գաղտնիքը գոտին պատրաստողի՝ Մաշտի Գուրգենի հոր՝ Տարախյան Մարտիրոսի վարպետության մեջ էր: Ժողովուրդն ասում էր՝ ըդպես մարդ ո՛չ ծնվել է, ո՛չ էլ կծնվի. էդ մատները հողը չըպտի մտնեին:

Ուշագրավ է, որ շուն զարկելու փեշակն անգամ Գյումրի քաղաքում անցել է ժառանգաբար: Շուն զարկող Կրդկրդ Խչոյի տղա Հարութը շարունակում է հոր գործը, և նրա շուրջ տեղական գրույցները հայտնի են բացառիկ հյութեղությամբ՝ վկայելով և ընդհանրացնելով քաղաքի հասարակ մարդուն բնորոշ վարքագիծն ու հոգեբանությունը: Շուն զարկող Հարութը, այսպես ասած, «պասպորտ չունեցող», թափառող շներին կրակում էր և ամեն զարկած շան պոչի դիմաց ստանում աշխատավարձ: Բայց մտածում է. «Ընձի միշտ կըմեղադրեն անմեղ հայվաններին սատկըցնելու մեջ: Հմի ես մտածել եմ. հ՛աշքս թաք ըդոնց պոչերի վրա է... Ընչի՞ գեշ մարդ էդնին: Առանց էն էլ շան կյանք է հ՛իրանցն էլ, մե՛րն էլ... Է՛, ես էլ փափախ կենեմ. շանը չեմ զարգե, պոչը կըկորեմ, կըհանձնեմ»:

Տեղական համ ու հոտով գրույցները ուշագրավ դրսևորումներով հանդես են գալիս երգիծական բանահյուսության ժանրերում:

#### **Երգիծական բանահյուսություն. զվարճախոսություններ, մանրապատումներ**

Դեռևս 19-րդ դարավերջից գրի առնված Գյումրու երգիծական բանահյուսության նմուշներն ու սրախոսությունները, կարճառոտ պատմությունները, որոնք մեծ տարածում են գտել քաղաքում, դարձել են տարբեր հավաքների բաղկացուցիչը: Հումորի, ծիծաղահարույց պատմությունների ու մանրապատումների (ըստ գյումրեցիների՝ «մազալու պատմությունների») ծագումնաբանությունը բացատրվում է ն՛ տեղացիների անսահման կենսասիրությամբ, և՛ այն իրողությամբ, որ այս քաղաք էին գալիս թե՛ հայկական, թե՛ Մերձավոր Արևելքի բնակավայրերից առևտրականներ ու միջնորդներ, որոնք բերում էին իրենց տեղավայրերի մանրապատումները, զվարթախառը պատմությունները և պատմում երկար գիշերների ընթացքում՝ այսպես առիթ տալով ուշագրավ մրցության, հատկապես երբ ասպարեզ էին մտնում նաև տեղացի կատակաբաններն ու կազմակերպում ուշագրավ «մեջլիս»[3, էջ 263]: Անեկդոտներ ու մանրապատումներ պատմում էին քաղաքային այգում, բաղնիքներում, շուկաներում, անգամ եկեղեցու բակում: Շատ հաճախ այդ պատումներն ունեին իրական հիմքեր ու նախատիպեր, որոնց դերերում հանդես էին գալիս տեղացիներից շատերը: Սրամիտ պատմություններ հո-

րինվում էին մինչև իսկ ողբերգական իրադարձությունների առիթով ու ժամանակ՝ այդպես դիմակայելով ողբերգությանն ու ծաղկեցնելով կենսասփրությունը:

Գյումրեցին հումորի մեջ իրեն զգում է ինչպես իր տանը. վկայություն այն բանի, որ հումորն ու երգիծանքն այստեղ հասցված են գեղարվեստական որոշակի մակարդակի:

Գյումրեցու կենսախիռն ոգին, որ նրա ներկայանալի բրենդն է, պատմամշակութային ճանապարհ է անցել: Հումորն ու երգիծանքը մշակութային բաղադրիչներ են, որոնցում արտահայտվում են նրա աշխարհընկալման լավատեսությունն ու կենսասփիլիսոփայությունը: Կատակաբանները կարծես «կյանքի գծերը» փորձում են իրենց պատմների կամ նարատիվների մեջ, որտեղ «հերոսները» դրության կոմիքմից հասնում են արարքի, վարմունքի, հարաբերությունների կոմիքմի:

Գյումրեցու հումորը նաև դիմադարձություն է. հումոր անողն իր զգացողությունների մեջ երբեմն դրսևորում է աշխարհի կառուցվածքը բեկելու կամ բարեփոխելու միտում: Գյումրեցին ապրում է հումորը, ինքնաբուխ հորդում է հումորը՝ որպես գոյաբանական վիճակի արտահայտություն: Նրա հումորը հաճախ այլախոսիկ է, գաղտնագրված. բողոքը, ըմբոստությունն ու սերը հումորի «փամփուշտով» են: Բնորոշ է գրոտեսկային, երբեմն ինքնառնչացնող հումորը:

Երկրաշարժից հետո ինքնաբերաբար ստեղծված հումորային տեքստերը սոցիալական բողոք էին, վիշտը գաղտնագրելու հնարանք («Ժաշկից առաջ տունն էինք մնացել, ժաշկից հետո դուրը մնացինք», -Գյումրու բնակչուհիներից մեկի խոսքը): Փլատակների տակ մնացած մարդիկ անգամ հումորով էին վերաբերվում ստեղծված էքստրեմալ իրավիճակին:

Գյումրեցիների սրամիտ խոսքերն ունեն իրենց բնավայրային բնավորությունը, տիպը, տեսակը, ծագումնաբանությունը, անգամ կառուցման մեթոդաբանությունը: Եթե հայկական շատ բնակավայրերում անեկդոտի առանցքում ծիծաղելի ինտրիգն է դառնում առաջնայինը, ապա Գյումրու անեկդոտներում «հերոսների» բնավորություններն ու վարքագծերն են իրենց վրա առնում սյուժեի զարգացումը: Սրամտություններն ու սրախոսություններն այստեղ երբեմն ձեռք են բերում **աֆորիզմային** արժեք, խտացվածություն ու իմաստ: Գյումրեցին մինչև իսկ ինքն իր երգիծանքից պաշտպանված չէ, և ինքնաերգիծանքը աշխարհը կենսասփրությամբ ընկալելու բնատուր շնորհ է:

#### **Մականունները՝ գյումրեցու բանահյուսական դիմանկարի ստեղծման փորձ**

Գյումրին հին ու հողին ամրորեն արմատակալած գերդաստանների օրրան է՝ տոհմիկ հատկանիշներով, նշանավոր գերդաստաններին պատկանող առանձնատներով, մականուններով, ծեսերով ու սովորույթներով, ավանդույթներով ու հավատալիքներով: Կարելի է ասել, որ Գյումրի-Ալեքսանդրապոլի գերդաստաններից յուրաքանչյուրի պատմությունը նրա տարեգրության մի էջն է՝ Գյումրին դարձնելով տոհմատունների քաղաք:

Ըստ էության՝ մականուններն ու տեղական գրույցները քաղաքի կենդանի մատյաններն են՝ խտացված հումորով: Կան մականուններ, որոնք տրվում էին ամբողջ տոհմին ու գերդաստանին. տիպական մի անձի տրվող բնութագրումն ընդհանրական է դառնում գերդաստանի համար, այսպես, *Անարժան Հարուստենք* (ըստ ժողովրդի՝ էդ

հարստությանն արժանի չէին, քանի որ քրտինքով չէին աշխատել. գտել էին), *Միլիոն Մանեթենք* (մե մանեթով հաց են ծախել. մանեթ-մանեթ՝ միլիոն մանեթ), *Բոբիկենք* (թոռը կրպատմե՝ պապս իր հարսնիքին սարքած սեղանների վրա ուրախությունից բոբիկ ոտներով էնպե՛ս է պարե, օր հեչ մե ափսեմ տեղեն չի շարժվե. ըդոր համար էլ մերոնց *Բոբիկենք* են ըսել [12, էջ 219]:

Հորինումի տարերքով բռնված՝ գյումրեցիները նույն գրույցն ու անեկդոտը ամեն անգամ կարող են պատմել նոր տարբերակով, այդպես ժողովրդական բանահյուսության կարևոր հատկանիշներից մեկը՝ ստեղծագործական հարստացումը դարձնելով շարունակական:

Ահա և «ներսի ու դրսի» անուն ունեցող տղերքը՝ Պոլոզ Մուկուչն ու Ծիտրո Ալեքը (հայտնի զվարճախոս-կատակաբաններ. Պոլոզ Մուկուչին մի առիթով հարցնում են՝ ընչի՞ բոլոր գյումրեցիները էրկու անուն ունին, կպատասխանե՞ մենք բացի մարդու դուսը աշելուց, նեսն էլ կաշենք), Արդար Մանուկը, որն իր մականունն ստացել էր Մբ Ամենափրկիչ եկեղեցու խաչն ի գագաթ հանելու համար, Գյուման Կարոն (հույս էր բռնորի համար), Չանգի Խաչոն (Ալեքսանդրովսկու անկյունում խանութ ուներ), Կախեթի Մուկուչը (գինու սկլաղ ուներ), Այհայը՝ Խաչատուրը (սարթ մարդ էր, փողոցով անցնելիս կանայք ոտքի էին կանգնում: Մի անգամ հարսներից մեկը տեղից չի բարձրանում, զարմանքով ասում է՝ այ-հա՛յ, էս ո՞ւմ հարսն է, որ ոտքի չի կայնի ընձի տեսնելուց: Հին քաղաքի թիվ 14 փողոցը նրա անունով ցայսօր էլ ժողովուրդը կոչում է Այհայի դար): Սելավի Ակոն. ապրում էր Չորի թաղում. մի օր Գյումրիում սելավ է ելել, Ակոյի կնկան ու էրեխին ջուրը օրոցքով քշել տարել է: Պատմում են՝ Սելավի Ակոն գուլար, կպտսովիր ու կըսեր՝ թուխսը ձագով եմ կորցրել: Գերեզմանի քարին էլ գրած է՝ «Սելավի Ակո»: Գաթաճի Կարոն. ֆուռ են ունեցել, կպատմեին՝ ընպես գաթա են թխել, արբեշումի նման կըհալիր բերնիդ մեջը: Ղասաբ Համոն (Պիճիկյան). կովը հեռվից տեսնիր, ճիշտ կըսեր՝ քանի կիլո կեղնի: Ղարիբ Կարոն. ոսկերիչ էր, ծնվել էր Էրզրումում, տեղափոխվել Կարս, ապա Ալեքսանդրապոլ: Քանի որ ուրիշ քաղաքից էր եկել, ըդպես էլ դարիբ մնաց, չձուլվեց էս քաղքին: Մոմճի Աբրահամը, պատվախնդիր ու հպարտ Երկան Ալեքը, Կոնկի Գիրքորը (կառապան), խանութպան Ճերմակ Համոն՝ Ճերմակ երեսով ու Ճերմակ խալաթով, և էլի շատ ուրիշներ: Նրանց շուրջ ամեն պահի ու ակնթարթի իմաստավորմամբ ստեղծվում էին պատմություններ, տեղական գրույցներ, չափածո երգեր, երբեմն էլ հեքիաթի սկսվածքով [3, էջ 260]: Ուշագրավ է իրական/պատմական դեմքերի վիպակալնացումը տեղական գրույցներում, որոնցում և ընդգծվում է ժողովրդական մտածողության տարերքը:

#### **Քնարական բանահյուսություն. ժողովրդական խաղիկներ, ողբերգեր**

Մեր գրառած քնարական երգաստեղծության նմուշները իրավիճակային են և կրում են ժամանակի բերած հոգեբանական ապրումները (Արցախյան պատերազմ, վիշտ, ցավ, կորուստ):

Սահմանային իրավիճակը բանասացին հասցրել է մտասնեռման, վշտի ապրումի տարբեր փուլերում նրա դրսևորած լեզվագագացողությունը տարբեր է: Անձնային փորձով առանձնացնելով պատերազմի իրողությանը վերաբերող երգ՝ բանասացը բյու-

րեղացնում, հարստացնում է իր ներաշխարհի գույներով և ապա հաղորդում մեզ: Մտասկզբում և արագալույսում, եթե բանասացն ունի անմիջական կորուստ, բնականաբար, խաղիկի ավանդական ձևը չի բավարարում նրան: Նա ողբերգի հնչեղություն է հաղորդում խաղիկին և խախտում վերջինիս ձևակառուցվածքային բաղադրատարրերը:

Նոր և ավանդական գրառումների բաղադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հիմնական փոփոխությունը կատարվել է մոտիվների և ապա տարբեր տողերի հարակցումների մեջ, երբեմն էլ տողերի պակասումով քառատողը դարձել է եռատող կամ երկտող:

Նորագույն խաղիկների մեծ մասը ստեղծվել է ավանդական մշակման ճանապարհով, երկուսի փոխներթափանցմամբ: Վշտի անմիջական ազդեցությամբ ստեղծված հորինվածքները ժանրային առումով դուրս են գալիս խաղիկի շրջանակներից և միտված են լալիքի երգերը: Մեծավ մասամբ դրանք բախտի, ճակատագրի կանխագուշակման խորհուրդ ունեն, վշտի, կորուստի կանխագուշակման գործառույթ:

Գնացի ջրի, սառավ, // Գնացի շաքարի, աղ դառավ:

Գնացի բանջրի, փուշ ու տատասկ դառավ:

տ. Գնացի չայը, սառուց դառավ, // Մէ դարդս հարուր դառավ,

էս ի՛նչ սև դարդի տեր էի, // Շաքար առա, աղ դառավ:

Հանելուկի ժանրին մոտեցող խաղիկ է, և սիմվոլանշանային համակարգի մեկնաբանությունը պայմանավորում է խաղիկի կանխագուշակող բնույթը: Վշտի ապրում արտահայտող խաղիկները ավելի կայուն են և՛ իբրև կառուցվածք, և՛ իբրև ռիթմական միավոր՝ սերնդեսերունդ անցնելով չեն ենթարկվում փոփոխության, իսկ եթե անգամ հանդիպում են խաթարված, ապա հին խաղիկի մշակման արդյունք են:

Տարբերակների գոյացման մեջ կարևորել ենք հետևյալ գործոնները.

ա) ժամանակի գործոնը. որքանո՞վ են անցյալի համեմատությամբ ներկայիս գրառումները փոխվել, ի՞նչ խաղիկներ են ակտիվացել (նկատի ունենք մոտիվացիան):

բ) Խաղիկի մեջ կատարված անվան ու տեղավայրի փոփոխությունը, որը երգի կամ խաղիկի այլ վայր տեղափոխվելու հետևանք է:

Ավանդական գրառումների մեջ թեմատիկ առումով առկա է նաև սոցիալական գործոնով պայմանավորված ապրումը: Տարբերակների առաջացման պատճառ է դառնում բարոյահոգեբանական գործոնը, մարդու կյանքում լավ կամ վատ հոգեբանական ազդակը: Հաճախադեպ է քառյակի երրորդ տողի փոփոխությունը. սովորաբար անհանգ լինելով՝ այն դուրսին է փոփոխության ենթարկվում, թեպետև բովանդակությունն արտահայտվում է երրորդ տողով: Երբեմն էլ այն դուրս է ընկնում, և քառյակը դառնում է եռյակ: Այսպես.

*Թոն եկավ երես-երես, // Բազարկյա՛ն, Աստված սիրես, // Բաշ Շորագյալ էրթաս, //*

*Իմ յարին հետդ բերես: տ. Ջուրն էլավ երես-երես, // Բազարկյան, աստված սիրես, // Իմ բալին գտնես, բերես:* Ավանդական խաղիկը պատերազմից հետո գրառել ենք եռյակ դարձած տարբերակով, սիրո կորստյան երգը դարձել է «կորուսյալ բալի» համար արտահայտված մորմոք: Չնայած կառուցվածքային այս փոփոխությանը՝ վշտի ապրումն է խորացել: Խաղիկները փոփոխությունների են ենթարկվում՝ պայմանավորված ժողովր-



դի, հասարակական-քաղաքական, տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով ու տեղաշարժերով: Խաղիկը շերտավորվում է՝ ընդգրկելով տարբեր ազգագրական խմբերին հատուկ առանձնահատկություններ [4, էջ 10]:

Խաղիկների մեջ ամենից կայուն մասը հանգն է և այն կազմող բառը: Երբեմն հանգ կազմող բառերը փոխվում են՝ ապահովելով նոր փոփոխակի գոյությունը:

Ավանդական երգի մեջ հաճախ խաթարվում են որոշ տողեր՝ ըստ բանասացի հոգեկերտվածքի և անհատական վերաբերմունքի: Բանասացի հորինման արվեստը, բառընտրության ունակությունը հավելում են փոփոխակի գեղարվեստական արժեքը:

#### **Մանկախաղաց երգեր ու խաղերգեր**

Գոյություն ունեն վարքի ազգային և համամարդկային մոդելներ, որոնք ուշագրավ դրսևորումներ են ստանում մանկախաղաց երգերում ու խաղերգերում [11, էջ 79]: Վարքի համամարդկային ստերեոտիպերը յուրաքանչյուր էթնոսի մակարդակում ունեն իրենց յուրահատկությունները:

Կենսահոգեկան ժառանգականության համաձայն՝ վարքի մի շարք ձևեր, ծագելով խաղերի մեջ, տարածում են գտնում մեր կենսական տիրույթում՝ իբրև աշխարհաճանաչման միջոց: Սրանով հանդերձ՝ խաղի ու խաղերգերի մեջ մենք իրացնում ենք որոշակի սոցիալական դերեր՝ արտացոլելով մեր էթնոսի խառնվածքի խնդիրը: Այս տեսակետից բնորոշ է ազգային վեպի մեջ Մարա Մելիքի գուրգ նետելու տեսարանը. գուրգախաղին ակամա մասնակից է դառնում ժողովրդի սիրելի հերոս տղա Դավիթը:

Անշուշտ, հայ դյուցազնավեպում ևս ստերեոտիպացվում են էթնիկական վարքի առավել նշանակալի տեսակները՝ որպես նախեղակ մտածողության ձևեր: Քանի որ մենք պատերազմիկ ժողովուրդ ենք, մեր խաղերի մեջ էլ գերակա են ազգային ուժային խաղերը /մկունդախաղ, գոմշակոծիվ, աքլորակոծիվ, պարանքաշոցի և այլն/:

Կոնֆլիկտային կամ ճգնաժամային իրավիճակներում էթնոսի և անձի բնավորության գծերը ինքնաբերաբար նույնականանում են և վարքի վերածվում: Այս պարագայում կարևորվում է բանահյուսական նյութի փոխանցումն ու նրա գործառական նշանակությունը: Հաղորդողը՝ մայրը, երեխային պատմում է հայրենիքի ներկա վիճակի մասին. *Դու պզտիզ ես, բարով մեծնաս, // Բարով մեծնաս, զինվոր դառնաս, // Ըուրի, բուրի, բուրի ջան...*

Օրորների մեջ հիմնական *ես*-ը դառնում է կենտրոն, միջուկ, որի շուրջը ձևավորվում, կազմավորվում են ազգի յուրահատկությունները:

Մանկական երգերից են գանազան **հաշվերգերն ու խաղավարտի երգերը**: Բոլոր դեպքերում խաղերն ու խաղերգերը, լինելով անձի հոգևոր պահանջմունքների բավարարում, իրենց նախնական մոտիվացիայի մեջ հասցեագրված են երեխային, հագեցված են մանկան նկատմամբ ջերմ սիրով ու գորովով, նրա ապագայի հանդեպ մեծ հույսերով, երեխային ամեն կարգի չարիքից պաշտպանելու հմայական միջոցների գործության խոր հավատքով [8, էջ 235/:

#### **Գերեզմանաքարերի ավանդական և արդի գրառումները**

Էպիտաֆիան /հուն. epitaphios-դամբանաքարի, գերեզմանի/ դամբանական բանաստեղծություն է, քնարական փոքրածավալ բանաստեղծություն, որը տալիս է մահա-

ցածի բնութագրիր: Անտիկ աշխարհում Էպիտաֆիան փորագրվում էր գերեզմանաքարի վրա, իսկ նոր ժամանակներում այն դառնում է ինքնուրույն բանաստեղծության տեսակ՝ պահպանելով, սակայն, դամբանական մակագրության ձևը [10, էջ 121]: Էպիտաֆիաները ժողովրդի գեղարվեստական մտածողության ու աշխարհատեսության քարեղեն վկայությունն են, որ ամփոփում են մարդկային հույզեր, ապրումներ, չապրած օրերի ափսոսանք:

Բացառապես անդրադարձել ենք կյանքից հեռացած անձանց հիշատակն անմահացնելու նպատակով հորինված վիմագիր ստեղծագործություններին ու Էպիտաֆիաներին: Այս արձանագրություններում գերազանցապես նշվում են հանգուցյալի անուն-ազգանուն-հայրանունը, ծննդյան և մահվան թվականները, երբեմն նաև կատարած գործերը, մասնագիտությունը, մահվան պատճառը և այլն: Որոշ շիրմաքարերի ձևավորումներ ունեն գեղարվեստական, իսկ տապանագրերը՝ պատմական (արձանագրագիտական) արժեք: Նյութը գրի ենք առել Գյումրու քաղաքային ու Շիրակ գերեզմանատներից: Պատմահամեմատական մեթոդով /առանձին ուսումնասիրությամբ/ քննել ենք տապանագրերի հորինվածքի ուրույն գծերը, բովանդակային ուղղվածությունն ու թեմատիկայի բազմազանությունը:

Հայ քարագործ վարպետների ճարտար ձեռամբ փորագրված հիշատակագրումները, գեղարվեստական արժանիքից բացի, հայ ժողովրդի կյանքի ու ավանդական կենցաղի վկայագրեր են: Այսպես՝ Գյումրու հին գերեզմանատանը տարածված են անձի երբեմնի զբաղմունքին առնչվող տապանաքանդակներ (զինագործի, դարբնի, դերձակի աշխատանքային գործիքների պատկերմամբ): Արտահայտելով մարդու զբաղմունքը, նախասիրությունները, երկրային ու երկնային պատկերացումները՝ գրառված Էպիտաֆիաներն ու գեղարվեստական մակագրություններն ունեն պատմական կարևոր սկզբնաղբյուրի արժեք:

Գերեզմանաքարերի ավանդական մակագրությունները կառուցվածքով տարբերվում են նորօրյա գրառումներից, թեև վերջիններիս մեջ պահպանվում են ավանդական հորինվածքին բնորոշ գծեր: Հորինվածքի ավանդական ձևին հատուկ է բանաձևային սահմանումը՝ *Աստ հանգչի խաղաղությամբ Մարիամ Ավիրեսնց (ծնեալ 1783, վախճ. 1831թ.): Աստ հանգչի ոսկերք Վարդիթեր Թովչեանցի, // Ով հանդիպի, տա ողորմի*: Կամ հետևյալ մակագրությունները՝ *«Այս է տապանն հանգուցյալ Գարեգին Ոգոմյանի: // Աստ հանգչի Բեթղեհեմ՝ կինն Հակոբի»*[5]: Վկայաբերվող նմուշները թույլ են տալիս ընդհանրացնել, որ հին տապանագրերում գերիշխում են կառուցվածքի ավանդական բաղադրատարրերը. կենսագրական պատումի ժանրը ներառում է ննջեցյալի կյանքի բեկումնային պահերը: Ի տարբերություն հին տապանագրերի՝ նորօրյա վիմագիր ստեղծագործությունները հորինված են գերազանցապես երկու եղանակով. կա՛մ կյանքին հրաժեշտ տվող անձի անունից է, կա՛մ նորահայտ հորինողի, առավել հաճախ մտերիմ հարազատի անունից: Մակագրությունները միշտ չէ, որ հորինված են վարպետ գրչով, բայց շատերը տխուր քնարի հուզիչ օրինակներ են:

Ուշագրավ է, որ քննվող վիմագիր ստեղծագործություններից կամ Էպիտաֆիաներից շատերը բարոյախրատական հորդոր-պատգամներ են՝ ժողովրդական իմաստու-

թյան բաբախով, որոնցում կարելի է առանձնացնել այն տողերը, որ բանաձևային արժեք ունեն և պայմանավորում են հորինվածքի յուրահատկությունը. «Ո՛վ անցավոր..., Ո՛վ անգութ մահ...», «Հիշի՛ր, անցո՛րդ /Ես իմ տանն եմ, իսկ դու հյուր ես աշխարհում», «Անցո՛րդ, կա՛նգ առ, մի՛ անցիր...», «Անցո՛րդ, մորս պես հիշիր... Խոնարհի՛ր գլուխդ, անցո՛րդ իմ բարի...», «Կարեկի՛ց անցորդ, թե՛ զիս հարցնես...», «Ա՛խ, երագներս չվող թռչնի պես//Դեռ ճամփակեսին թնայափ եղան» [5] և այլն: Հետադետյան շրջանի գրառումներից շատերն սկսվում են «Երկրաշարժը տունս քանդեց», «Ա՛խ, երկրաշարժ, ի՞նչ արեցիր», «Երկրաշարժը կյանքս խլեց» և նման տողերով: Տապանագրային արվեստը՝ պարզ, անպաճույճ բառ ու բանով հորինված, հուզիչ է ժողովրդական մտածողության դրսևորումներով. *Գնա, արի, ընձի տես, // Ես էլ մարդ եմ քեզի պես, // Դու չես եղնի ընձի պես, // Բայց ես կեղնիմ քեզի պես:* Կիրառված են նաև միջնադարյան բանաստեղծությանը բնորոշ ճարտասանական դիմումների յուրահատուկ ոճեր. «Ա՛խ, դու դաժան բախտ...», «Ո՛վ դու կարեկից...», «Ո՛վ դու գերեզման, ինչո՞ւ չես բացվում» և այլն:

#### Հմայական բանահյուսություն:

#### Ժողովրդական հմայական պաշտպանիչ աղոթքներ

Աղոթել հնարավոր է հոգու տարաբնույթ վիճակներում (մենության, անհուսության ժամանակ, մահացու վտանգների, դժոխային ցավերի, անօրենության դեմ, ամբարիշտների սրից ու թշնամիների ձեռքից ազատվելու, չարից ու վտրձություններից զերծ մնալու, նաև հաղթական ելքի, սիրո հաջողության ու ցանկալիին հասնելու) ընդհուպ հասնելով Աստծո ներկայության վառ զգացողության: Հմայական բանահյուսության հիմնական տեսակներն են **անեծքները, օրհնանքները, երդումները և աղոթքները:** Սրանք իրենց ժանրային նպատակային ընդհանրություններով հանդերձ, տիպաբանական կառուցվածքով որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Անեծքներն ու օրհնանքները կառուցվածքով տարբերվում են թե՛ երդումներից և թե՛ հմայական աղոթքներից, դրանք ունեն պարզագույն կառույց և բաղկացած են մեկ կամ մի քանի համագոր ցանկության խոսքերից: ...Մինչդեռ երդումները և, մանավանդ, աղոթքները, իրենց տիպաբանական կառուցվածքով հակադրվում են անեծք-օրհնանքներին [9, էջ 29]: Գրառել ենք ժողովրդական հմայական բազմաթիվ աղոթքներ: Դրանք ուղղված են Աստծուն և սրբերին, կիրառվել են չար ուժերից, հիվանդություններից, թշնամիներից ու արհավիրքներից պաշտպանության նպատակներով: Այս աղոթքները հիմնականում փոքրածավալ, չափածո ոտանավորներ են, որոնցում առաջին հերթին զարմացնում է Աստծո կենդանի գործության հանդեպ հավատը: Աստված, սրբերը, ըստ աղոթողների, կենդանի, գործուն գորություններ են, բայց միաժամանակ անչափ հարազատ ու մտերիմ, որոնց կարող ես դիմել և՛ որպես հայր և՛ որպես զավակ:

Ժողովրդական աղոթքները բաժանվում են երկու տեսակի՝ սովորական աղոթքներ և հիվանդ բժշկելու աղոթքներ: Սովորական աղոթքներով ամեն մի հավատացյալ դիմում է աստծուն և կամ մի որևէ սրբի՝ օգնության խնդրանքով, որ դժվար պահերին հաջողություն տա իր գործունեության մեջ: Այս տեսակի աղոթքները շատ էին տարածված:

Հիվանդ բժշկելու աղոթքները որոշ պառավների մենաշնորհն էին և քիչ հայտնի էին ժողովրդի լայն խավերին: Որոշ պառավներ, ժառանգաբար սովորելով իրենց մայ-

րերից, որպես մասնագետ արհեստավորներ, զբաղվում էին բուժիչ աղոթքներ ասելով: Հիվանդների ազգականները հրավիրում էին այդ պատավներին, նստեցնում հիվանդի անկողնու մոտ, որպեսզի նա աղոթեր: Պատավները հանում էին գրպաններից մի որևէ առարկա, գլխավորապես օձի գլուխ /մեր գրառումներում՝ ասեղ,-Կ.Ս./ և կամացույց աղոթում, քշում էին հիվանդի վրայից նրա ցավը: Իրենց աշխատանքի համար նրանք ստանում էին վարձ՝ փող կամ մթերք: Այդ պատավները իրենց աղոթքները ոչ ոքի չէին սովորեցնում, ասում էին, որ այդ դեպքում աղոթքը կորցնում է իր բուժիչ հատկությունը:

Գրառել ենք ժողովրդական հմայական բազում աղոթքներ՝ «ուղղված չար ոգիների դեմ, որոնք վնասում են մարդկանց ու հիվանդություններ հարուցում: Իբրև այդպիսիք հանդես են գալիս գիշերային չարունք, ծննդկաններին վնասող ալերը /ալք/, Գրողն ու հիվանդության ոգիները և չար աչքը» [1, էջ 92]: Այս աղոթքները հիմնականում հաճախ ուղեկցվում են որոշակի հմայական գործողությամբ, օրինակ. *Պատրած, կայնած արեգակ՝ Աստված, Չար աչքից, չար նաֆասից, չար նիաթից, Մավուր գալած փորձանքներից ու ցավերից ազատ պայես*: Ըստ բանասացի հաղորդման՝ «Մարդըն օր չար աչք առած կեղնի, հենց կաղոթեմ, կըսկսեմ արոջկտալ, ձեռքս կառնիմ մե հատըմ ասեղ, օր չարի աչքը հանեմ ու գետինը կըծակըռտեմ»:

Գլուխըս դնեմ սնարքին, //Չոգիս տամ դրախտին, //Թողնիմ օթևանըս, Քրիստոս գիրկըս, //Լուսեղեն խաչը երեսիս, //Տերն օր պայե, օվ կըռնա տանել զիս [5]:

Լինելով քրիստոնեական աղոթքներ՝ դրանք հաճախ հին հայերի հնագույն հավատալիքների, նաև որոշակի ծիսական գործողությունների ու սնահավատությունների արձագանքներ են: Այս աղոթքներից շատերը գրվել են գալարաթղթի վրա, դարձել հմայիլներ և կարվել հագուստին՝ նպատակ ունենալով պահպանել այն կրողին [9, 28]:

Ուշագրավ է *Աչքի հատի* հետևյալ աղոթքը. *Մե ծովըմ կա, Մովի վրա հատըմ կա, Քաշե՛ հատը, քի՛ց ջուրը*: Բանասացը նկարագրում է նաև հմայական գործողությունը, որ կատարում է աղոթելիս. «Աչքին օր հատ գուքա, էս աղոթքով կբուժեմ: Հիվընդին կընստեցնեմ դըսի դռան շեմին, ձեռը կուտամ բաժակըմ ջուր, իմ ձեռքս էլ բուռըմ ցորեն կամ ձավար կառնիմ, էնքան, օր տեյ աղոթքի վերջը ձեռքս բան չմնա: Պտղունցով կամաց-կամաց կըլցնեմ ջրով բաժակը, հետո էդ բաժակի ջրեն մատով կըցփնեմ աչքի մեջը: Էդ բաժակի ջուրն էլ գլխի վրայեն դուրս կըլցնեմ: Էնքան պըտի աղոթք էնեմ, տեյմոր պարպի ձեռիս ցորենը: Երկրորդ օրը բրինձ կառնիմ ձեռքս ու նույն բանը կէնեմ: Երրորդ օրը մե կըտորըմ աղով կէնեմ աղոթքըս: Երեք անգամից հետո կանցնի: Միֆտա, մեկ էլ վերջում կըսեմ «Չայր մերը», «Աչք ամենեցուն», «Գոհանամ զքեն, Արարիչ Աստված», «Փրկիչ փարատիչ», «Աղոթք Նարեկացուց» [5]:

Նորենցի աղոթքի տեքստը՝ *Նորենց, նորենց, Մուսնի նորենց, Քուկիդ՝ թագավոր, Մովիս՝ թագավոր*, ասելուց հետո նորենցը կըտրելու համար արծաթ դրամը օխտը հոգու աղոթել կուտային, կիսալուսնի ձևով կըկտրեին ու կըկախեին էրեխու վզին [5]: Այս տիպի հմայական աղոթքները, որտեղ աղոթող անձը հանդես է գալիս հմայագործի ակտիվ դերով, իրեն վերագրում հրաշագործ բացարձակ գորություն և դրա ու իր արտաբերած աղոթքի շնորհիվ հասնում ցանկալի նպատակին, անվանում ենք **հմայագործի բացարձակ ակտիվության աղոթքներ**: Աղոթքների այս տիպն ունի նախնական բնա-

վորություն, տիպաբանորեն սերում է նախնական հմայություններից, բացառում է գերբնական (աստվածային և դիվային) ոգիների միջամտությունը և ամբողջապես հենվում աղոթողի խոսքի և գործի հմայական ներգործուն գործության վրա: Հաճախ հմայական աղոթքի գրայնացմամբ առավել է գորանում նրա ազդեցությունը, քանզի խոսքի հմայական գործությանը գումարվում է նաև գրի կախարդական ուժը՝ որպես արդյունք գրի հնագույն պաշտամունքի [9, էջ 31]:

#### **Գյումրու ասույթաբանական բանահյուսությունը**

Շիրակի տարածաշրջանի, մասնավորապես՝ Գյումրու ասույթաբանական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում **դարձվածքները**, որոնք կայուն, վերաիմաստավորված նշանակությամբ բառակապակցություններ են՝ [2, էջ 5] բաղկացած երկու և ավելի ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, որոնց մեջ կարող են առկա լինել ոչ միայն փոխաբերական, այլև ուղիղ իմաստներ: Ինչպես առած-ասացվածքները, այնպես էլ բանաձևային այս տեսակները ակտիվ կենցաղավարում են և իբրև խոսքի կարճասույթ բանաձևեր՝ առատորեն գործածվում են գյումրեցու խոսակցական լեզվում՝ այն դարձնելով պատկերավոր ու արտահայտիչ: Այսպես, օրինակ՝ հացը ժողովրդական պատկերացումներում ու դարձվածքային միավորներում առանցքային դերակատարում ունի. *Հացով երդվել են, իրար հետ հաց են կիսել*, մինչ օրս էլ արդիական են *հացով մարդ, հա՛ց տուր, որ հաց բերի, հացը կոկորդով ներս չգնալ, հացը շեն անել, հացի մեջ աղ չլինել, հացը ցամաք ուտել, հացի պռունկը կտրել, հացով տեղ, հացին յուղ քսել* և այլ դարձվածքներ ու արտահայտություններ:

Ուշագրավ է, որ Կարնո բարբառակիրների լեզվամտածողության դրսևորումներում, ժողովրդաբարբառային հարադրություններում ու դարձվածքային միավորներում առկա են օտար բառանվանումներ ու արտահայտություններ, որոնք հաճախ դառնում են բարբառային բառերին համաձույլ՝ *խանը անթև դուշ է, հոտած ջրերի հետ յուլա կերթա, բեյնի դափաղ է, գյամերը քաշե, դուշմնի մալ է, կաթիղ գյորա խոսա, դոջա սև ձուն է դառե, դալաթ ես էրե* և այլն: Հիշյալ խոսքային բնագրերը (տեքստերը) ձևավորված են ժողովրդական դարձվածաբանության յուրահատկություններով. դրանք մեծավ մասամբ համեմատության, փոխաբերության, մակդիրի պատկերավորման հնարներով ավանդական ասույթներ են՝ կարճ բանաձևումով ու ներփակ կաղապարով: Սրանց պես ինքնաբավ խոսքային պատրաստի կազմություններ են նաև *անպոչ գդալ, անթաղ մեռել, անֆոտ ծաղիկ, անկրակ մուխ* և այլ դարձվածքներ, որոնք անվանողական արժեք ունեն, և որոնցով բնութագրվում են այս կամ այն անձն ու իրադրությունը:

#### **Առած-ասացվածքներ**

Ժողովրդական բանահյուսության ամենակենսունակ ժանրերից են, որոնց փոքր ծավալի մեջ խտացված են ժողովրդական իմաստությունն ու փորձը, դիտողականությունն ու լեզվամտածողության առանձնահատկությունները:

Ինչպես նշում է Ա. Ղանալանյանը [6, էջ X], բովանդակության, ձևի և ծավալի տեսակետից մոտ լինելով միմյանց, ժողովրդական առածներն ու ասացվածքները բնութթով տարբեր են իրարից: Առածը այլաբանական ստեղծագործություն է, որի բուն միտքը արտահայտված է անուղղակիորեն, ասացվածքը իրականությունը դրսևորում է ուղ-

դակի ձևով: Առածների մեջ հասարակական, կենցաղային որևէ երևույթ, հարաբերություն, բարոյական, փիլիսոփայական որևէ միտք բացահայտելու համար ժողովուրդը դիմում է բնությունից, կենդանիների ու բույսերի կյանքից վերցված զուգահեռների: Այսինքն՝ առածների մեջ իբրև այլաբանության ատաղձ լայնորեն օգտագործված է կենդանական ու բուսական սիմվոլիկան, ինչպես հետևյալ օրինակներում. *Լավ եզր լծի տակը կերևա: Շունն ամոթուն վարտիք է հագե: Շունն հ'անգաջ կըղորդեն կըվախենա: Շունն էլ գարուն գ'ելնի, կաշուն հարցրա: Անձրևն էգավ, կոշտերը պարտըզվան: Անձրևն փախանք, կարկտի ռաստ էգանք [5]:*

Սոցիալական կյանքի գնահատման ու փորձառության վկայություն են հետևյալ առած-ասացվածքները. *Պարտքը կրագե շապիկ է: Հարուստ մարդը օձ կերավ, ըսին՝ դեղ է, աղքատը կերավ՝ ըսին՝ սոված է: Երդիկ վարողն էլ է մեռել [5]:*

Գյումրեցու առած-ասացվածքների մեջ հմտորեն արտացոլվել են նրա առտնին կյանքի խնդիրներն ու մտահոգությունները, փորձառությունը, սոցիալական հարաբերությունները, հոգեակարագրի ընդհանուր գծերը, որոնցից մակաբերվում է դիպուկ եզրակացությունը: Ուշագրավ է, որ նրա լեզվամտածողությունը գրեթե բոլոր իրավիճակներում բանաձևային է. առավելապես վկայաբերում է այնպիսի օրինակներ, որոնք բխում են իր կենսափորձից ու իմաստասիրությունից: Հակված է իր խոսքը կառուցելու նշանների ու սիմվոլների լեզվով իբրև խոհափիլիսոփայական բանաձևեր: Առած-ասացվածքներում տեքստի բառային միավորները նվազագույնի են հասցված:

Բոլոր դեպքերում առածների իմաստաբանական հիմքը մարդու ենթագիտակցական արքետիպի մեջ է (ինչպես՝ *ամեն մարդ իր փոսը կլցնի*): Յուրաքանչյուր առած-ասացվածք անփոփոխ ու քարացած խոսքային ասույթ չէ, քանի որ ապրում է մեր գիտակցության մեջ և կրում է որոշակի փոփոխություններ՝ համապատասխանելով կյանքի տարբեր իրադարձություններին: Յուրաքանչյուր ժամանակ ունի առած-ասացվածքի իր ըմբռնումը: Սրանով հանդերձ՝ առած-ասացվածքների նախանշան մեկնությունների մեջ այնքան է խտացված մարդկային փորձը, որ երբեմն դրանք միտված են դառնալու մտածողության կաղապարատիպեր, օրինակ՝ *Ամեն օր՝ հրացանը, օրըմ էլ եղանք թող կըրակե: Անտեր ժամին սաղաները տեր կեղնին: Երկնքն գեղին է ընգել, գեղինն էլ տեղ չկա:*

Կան առածներ, որոնք բնորոշ են միայն գյումրեցու մտածողությանը. *Շան պոչը ինչքան էլ քրոտ կըղրես, էծ չի դառնա: Կովը թող փորով էղնի, եր կըծնե, թող ծնե: Կիսովի արտը կռունգն է տարե [5]:*

#### **Օրինանքներ ու մաղթանքներ, երդումներ ու անեծքներ:**

Գյումրեցիների բանահյուսության մեջ այս ժանրերը նշանակալի տեղ են գրավել, ամենօրյա կիրառություն են ունեցել և սովորական խոսքին անգամ իմաստ ու արտահայտչականություն են հաղորդել:

Երդումները դիմացինին հավաստիացրել են խոսողի ճշմարտացիությունը, խոսքի իսկությունը, քանի որ վկայակոչել են Աստծուն, աստվածամորը, Քրիստոսին, սուրբ մեռոնը և երդվողի համար թանկ արժեքներ (*«Էն աղ ու հացը վկա, թե սուտ է: Էն աղոթքանը վկա: Էս արևը գլխիս խավարի /սննա/, թե սուտ ըսեմ: Էս բարի լուսը վկա: Էս բարի իրիգունը վկա: Էս կայնած արևը ... : Սուրբ հմայիլները վկա. բարեխոս են*

հայր Աստծուն: Մուրբ Կարապետի մայրը վկա. անմեղի հավարին հասնող է: Մուրբ Գևորգը վկա: Վերև Աստված /վկա/: Փութքի գորավոր Մուրբ Սարգիսը վկա:

Երդումների կառուցվածքը, սովորաբար, բնորոշվում է տիպաբանական երկու պարտադիր բաղադրիչների՝ երդման պայմանի և իրադրության հարակցումով: Այսպես.

Էս նեղ տեղեն չազատվիմ, թե սուտ ըսեմ: Նամարդ էղնիմ, թե սուտ ըսեմ: Ջուխտ աչքով քոռնամ, թե սուտ ըսեմ /խոսամ/ և այլն: Շեղատառ բաղադրիչները երդման պայմաններն են, իսկ սովորական տառերովը՝ երդման իրադրությունները, որոնց առիթով վկայակոչվում են երդման պայմանները: Պայմաններն ու իրադրությունները բնույթով ու բովանդակությամբ տարբեր ու հակադիր են միմյանց: Ուստի և երդումները տարբեր մակարդակով ու որակով բաղադրիչների հարակցմամբ կազմված բարդ կառույցներ են [9, էջ 30]: Մեր գրառած երդման բանաձևերում կան միայն գյուճարեցուն հատուկ նմուշօրինակներ. *Քելե էրթանք ժամ, էրգուսըս էլ մոմ վառենք, յէս քու մոմը մարեմ, դու՝ իմ, Աստված թող մեր հախ ու դատաստանը էնե: Յոթվերքը վկա: /տ. Աստվածածին, Յոթվերքը վկա/: Յոթվերքց պատկերքը վկա/:* Հետևյալ **երդումներն ու օրհնանքի** բանաձևերը վկայում են հացի կենսական նշանակությունը. *Թե սուտ ըսեմ, էս հացը լուսըս բռնե: Էս հացին քոռ աշեմ, թե...* Երբեմն պայմանի բանաձևը բացակայում է. *Էս հացին քոռ աշեմ: Էս հացը ձեզի հավատացնե...// Աստծու անհատնեղի հացն ուտես:// Հայր Աբրահամի հացը ուտես: // Հիսուսի հացը ուտես:*

Ժանրային տարբերություններով հանդերձ՝ անեծքներն ու օրհնանքները կառուցվածքային հատկություններով շատ դեպքերում համապատասխանում են միմյանց և ունեն սերտ ընդհանրություններ:

Հայ ժողովրդական **անեծքները**, ըստ իմաստի, տիպաբանականում են չորս հիմնական խմբերի. 1. Մարմնական պատիժների ցանկություն /օր.՝ *Տասը մատեղ մե մատը մնա, էն էլ մատնշունչ էղնի/*: 2. Սոցիալ-քաղաքական պատիժների ցանկություն /*Ֆալաքը երկնքեն ժրնջիլները կախե գլխուդ/*: 3. Բարոյամարմնական պատիժների ցանկություն /*Մեջքդ գեղինը մաշե, աչքդ՝ երկինքը: Ժամի դուռը կայնիս, մուրաս/*: 4. Հոգեկան պատիժների ցանկություն /*Քյադակ ընկնիս, թներդ կըրծես/*: Մահվան ցանկությունը տարբեր դրսևորումներով ընկած է անեծքների մեծ մասին հիմքում [7, էջ 199]: *Սև քունը մտնիս, յերգան էրած տեսնիս: Աստծու բեբելական կրակը վրեդ /տ.՝ վրեքըդ/* [5]:

Ըստ ժողովրդի՝ «անեծքը երգուբերնանի սուր է». եթե անիծում են անմեղին, վերադառնում է անիծողին նույն ուժգնությամբ, հետևաբար անեծքի բանաձևային սկզբվածքը որոշակի պայմանախոսք է՝ «հեռի՛ լսողաց...»: Առհասարակ անեծքները վկայում են ժանրի հնագույն արմատներն ու հայ ժողովրդի պատմական անցյալը: Դրանք բանասացի բացասական ցանկություններն են, երբ խոսակցին ցանկանում են հիվանդություն, սոցիալական անապահով վիճակ, մինչև իսկ մահ: Օրինակ՝ *Հ՛աշքիդ լուսը առաջըդ թափի: Ասասնից մահ խնդրես, չգտնիս: Բեյնեղ յէլնի՝ ծոցդ լցվի, գոտիկըդ ամուր էղնի՝ վար չթափի: Գեղնեն գերի էղնիս: Գլխիդ վերևը շալվար /տ.՝ վարտիք/ չտեսնիս/5/* և այլն:

**Օրհնանքները** կարող են կազմված լինել տարբեր բաղադրիչներով, օր.՝ քառաբաղադրիչ են՝ *Աստված բարի վայելում տա: Աստված մեկըդ հազար էնե: Աստված երկար ձեռքը չկարճըցնե: Հակոբա օրհնությունը վրեքըդ էղնի: Աստծու աչքը վրեղ էղնի/:*

Բազմաբաղադրիչ են՝ *Աստված քեզի էնքան բարի տա, օր բարուդ մէջը մոլորիս: Դու քու բարովըդ ընգնիս, ընձի մոռանաս: Թները փռէ, դրախտ էրթա:// Տուն ու դուռըդ շէն մնա, ինչքան օր պակսըքրինք, Աստված ավելցընէ[5]*՝ նախադասություններով:

Նույն օրհնանքի բանաձևը կարող է ունենալ տարբերակներ՝ մեկ կամ մի քանի բառերի փոփոխությամբ. *Բարի լուսը բացվի ձեր վրա /տ. ձեր տան ու տեղի վրա/: Բարի լուսը բացվի ձեր բախտի վրա:*

Օտար բառային միավորների գործածությունը ասույթային բանաձևերում վկայում է մերձակա հարևան ժողովուրդների լեզվական ազդեցության մասին՝ Հայր Աբրահամու *բարաբայթն* ունենալով: Աստված *գյումանդ* չկտրէ: Աստված *ջանսադություն* տա և այլն [5]:

Մկրտության ժամանակ եկեղեցում սանամայրը քավորի թներին փռում էր խաչաձև բուսանախշերով տղաբերքի ու կնունքի նշանակ մետաքսյա սրբիչ, որի երկու ծայրերին էգ ու արու թռչնի պատկերներ էին: Սրբիչի վրա դնում էին նորածնին՝ բարեմաղթելով. «*Կանաչ մեռոնը օգնական, պահապան էղնի*», «*Քաղցր մնա քավորը*», «*Մուրբ մեռոնը բարեխոս լինի*»: Իսկ սիրահար երիտասարդների հովանավոր սուրբ Մարգիսը վկայակոչվում է բանահյուսական պատկերավոր բանաձևերում, ցանկության հմայական խոսք-երգումներում՝ «*Ս. Մարգիսը վկա, նեղյալի հավարին հասնող է, մուրազատու է, անմեղն ու մեղավորը կջոկէ*»: Մուրբն ամենակեցույց է, կյանքի գորություն բերող, կենաց խորհրդի հովանավոր: Հիշվում է նաև ծննդկանի աղոթքներում. Տիրոջ երամի մեջ է. «*Մեկը՝ Հիսուս, մեկը՝ Քրիստոս, տղա մանուկ սուրբ Կիրակոս, գորավոր սուրբ Մարգիս*»: Երկունքի ցավերը թեթևացնող է, ստնտուին՝ կաթնառատություն շնորհող:

Օրհնանքներով ու բարեմաղթություններով լավագույն ցանկություններ են մաղթում իրենց հարազատներին, մտերիմներին և առհասարակ մարդկանց, որոնց նկատմամբ երախտագիտության զգացումով են լցված:

Բարեմաղթություններն ու օրհնանքները օգտագործվել են նշանադրության ու հարսանիքի, նորածնի ծննդի ու կնունքի, հանգուցյալի հարազատներին մխիթարելու ժամանակ, որևէ մեկից աջակցություն և օգնություն ստանալիս և այլն: Օրինակ՝ «*Քար էրտաս, կանաչ դառնա*», «*Աստու աջն ու խաչը գլխուդ էղնի*»: Օրհնանքներում առավելապես կիրառել են Աստծո օգնության ու հովանավորության պարագան: Քանի որ այս ժանրերի հիմքում առկա է խոսքի հմայական ուժի նկատմամբ ունեցած հավատը, ապա թե՛ օրհնելիս և թե՛ անիծելիս յուրաքանչյուր գյումրեցի համոզված էր, որ իր սրտի լավ կամ վատ ցանկությունը խոսքով հաղորդում է դիմացինին:

Այսպիսով՝ Գյումրու ասույթային բանահյուսությունը հարուստ է գյումրեցիների խոսքին բնորոշ բարբառային հյութեղ արտահայտություններով, առածային ասույթներով ու ոճերով, որոնք օգտագործվել են ժողովրդախոսակցական լեզվում: Դրանք ի հայտ են բերում գյումրեցիների լեզվամտածողության և բառընտրության առանձնահատկությունները, աչքի են ընկնում խոսքի դիպուկությամբ, սրամտությամբ, երբեմն էլ դիմացինին ծաղրելու յուրահատկություններով: Օրինակ՝ *Լիզուն օխտը գեղ կքշէ: Ըխտավորի էջ է դառն: Ջրնգը ընկել է և այլն:*



**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Ամփոփելով կարող ենք ասել, որ մեր հիմնական նպատակամիտումն է եղել ժամանակի կորստից փրկել այն նշխարները, որոնք հայ ազգաբնակչության բանավոր ավանդության մեջ տակավին գոյատևող, հարուստ ու բազմազան ստեղծագործություններ են: Միաժամանակ փորձել ենք պարզել ազգագրական տարբեր խմբերի բանահյուսական ավանդապահության աստիճանը, գրառված նյութերի բանահյուսական որակը՝ ըստ աշխարհագրական որոշակի տեղաշարժերի, բանասացների սեռատարիքային հատկանիշներն ու դրանց կապը սոցիալ-պատմական ու հոգեբանական խնդիրների հետ: Ակնհայտ է, որ բանավոր երգաստեղծության տարբերակներում պահպանված են երգի ավանդական ձևն ու չափը: Տարբերակներում առկա է ավանդական կայուն մոտիվը, և շեշտադրումն ընթացել է կա՛մ նոր մոտիվի հավելումով, կա՛մ տեղայնացման ճանապարհով:

Նկատելի է բանահյուսական ժանրերի կենցաղավարման երկակի գոյավիճակ՝ ակտիվ կենցաղավարում, երբ այս կամ այն ժանրը որոշակի տեղ ունի ազգագրական տվյալ շերտի կյանքում, և պասիվ կենցաղավարում, երբ ժանրը (հեքիաթ, ժողովրդական վեպ) աստիճանաբար մոռացության է մատնվում, քանի որ գերարագ ժամանակներում բանահյուսական նյութը համաշեշտ է մեր կենսակերպին ու գոյության ռիթմերին:

### Գրականություն

1. **Աբեղյան Մ.** *Երկեր*, Է հատոր, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1975: 603 էջ:
2. **Բեդիրյան Պ.** *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*: Երևան: «Լույս» հրատ., 1973: 231 էջ:
3. **Գյումրի, Գյումրի. քաղաքը և մարդիկ**, Գյումրու քաղաքապետարան: 2009: 445 էջ:
4. **Գրիգորյան Ռ.** *Հայ ազգագրություն և բանահյուսություն*: Հ. 14: Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ.: Երևան: 1983թ.: 263 էջ:
5. **Դաշտային բանահյուսական նյութեր**, Կ. Սահակյանի անձնական հավաքածու:
6. **Ղանալանյան Ա.** *Առածանի*, Երևան: Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1960: 398 էջ:
7. **Հարությունյան Ս.** *Անեծքի և օրհնանքի ժանրի հայ բանահյուսության մեջ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975թ.: 270 էջ:
8. **Հարությունյան Ս.** *Բանագիտական ակնարկներ*: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 262 էջ:
9. **Հարությունյան Ս.** *Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ*: Երևան: ԵՀ հրատ.: 2006, 504 էջ:
10. **Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ.** *Գրականագիտական բառարան*, Երևան, «Լույս», 1980. 121 էջ:
11. **Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ.** *Էթնիկական մոդելները և ստերեոտիպերը մանկախաղաց կրգերում ու խաղերգերում*, // «Սերունդների երկխոսություն» միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, «Գիտություն» հրատ.: 2024: 77-91 էջեր:
12. **Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ.** *Խաչը՝ թիկունքիս, Յոթվերջը՝ սրտիս // ՀՀ ԳԱԱ ԾՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 11, Գյումրի: 2008:*

### References

1. **Abeghyan M.** Yerker, volume E [*Yerker*], Armenian SSR GA ed. Yerevan: 1975. 603 p. (in Armenian)
2. **Bediryan P.** Phraseology of modern Armenian. [*Zhamanakakits' hayereni dardzvatsabanut' yun*]. Yerevan. "Luys" ed., 1973. 231 p. (in Armenian)
3. **Gyumri. Gyumri. city and people**, [*Gyumri. Gyumri. k'aghak'y yev mardik*], Gyumri Municipality. 2009. 445 p. (in Armenian)
4. **Grigoryan R.** Armenian ethnography and folklore. [*Hay azgagrut' yun yev banahyusut' yun*]. H. 14: Journal of the Armenian SSR GA. Yerevan. 1983. 263 p. (in Armenian)

5. **Field folklore materials**, [Dashtayin banahyusakan nyut'er], K. Sahakyan's personal collection. (in Armenian)
6. **Ghanalanyan A.** Aratsani, [Arratsani], Yerevan. Armenian SSR GA ed., 1960. 398 p. (in Armenian)
7. **Harutyunyan S.** The genre of curse and praise in Armenian folklore, [Anetsk'i yev orhnank'i zhanry hay banahysut'yan mej], Yer., USSR State Publishing House, 1975. 270 p. (in Armenian)
8. **Harutyunyan S.** Philosophical essays. [Banagitakan aknarkner]. Yerevan, "Science" publishing house of RA NAS, 2010, 262 p. (in Armenian)
9. **Harutyunyan S.** Armenian magical and folk prayers. [Hay hmayakan yev zhoghovrdakan aghot'k'ner]. Yerevan. YU ed. 2006, 504 p. (in Armenian)
10. **Jrbashyan Ed., Makhchanyan H.** Literary dictionary, [Grakanagitakan barraran], Yerevan, "Luys", 1980. 121p.. (in Armenian)
11. **Sahakyan K., Hovhannisyan R.** Ethnic models and stereotypes in children's songs and games, [Et'nikakan modelnery yev stereotipery mankakhagats' yergerum u khaghergerum], // "Generations dialogue", Proceedings of the International Conference, Gyumri, "Science" ed. 2024. 77-91 pp.. (in Armenian)
12. **Sahakyan K., Hovhannisyan R.** The Cross is behind me, the Sevenfold is in my heart [Khach'y, t'ikunk'is, Yot'verk'y, srtis] // "Scientific Papers" of the ShCAS National Academy of Sciences of the RA. V. 11, Gyumri. 2008. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **01. 11. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **30. 11. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

#### **Տեղեկություններ հեղինակների մասին**

**Գարինե Արամի ՍԱՀԱԿՅԱՆ**՝ հոգեբ. գիտ. թեկնածու,

ԳԱԱ Ծիրակի ՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող,

ԾՊՀ հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, Գյումրի, ՀՀ,

էլ. հասցե՝ [sahakyanani@mail.ru](mailto:sahakyanani@mail.ru) // [orcid.org/0009-0008-6566-0911](https://orcid.org/0009-0008-6566-0911)

**Karine Aram SAHAKYAN**: PhD in Psychology, associate professor,

Researcher at Shirak Center for Armenological Studies of NAS,

Head of the Department of Psychology and Sociology of SUSH, Gyumri, RA

e-mail: [sahakyanani@mail.ru](mailto:sahakyanani@mail.ru) [orcid.org/0009-0008-6566-0911](https://orcid.org/0009-0008-6566-0911)

**Карине Арамовна СААКЯН**: кандидат псих. наук, доцент,

научный сотрудник ШЦ арменоведческих исследований НАН,

Заведующий кафедрой психологии и социологии ШГУ, Гюмри, РА,

эл.адрес: [sahakyanani@mail.ru](mailto:sahakyanani@mail.ru) // [orcid.org/0009-0008-6566-0911](https://orcid.org/0009-0008-6566-0911)

**Ռոզա Պողոսի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**՝ ԳԱԱ Ծիրակի հայագիտական

հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող, Գյումրի, ՀՀ,

էլ. հասցե՝ [vard-rosa@mail.ru](mailto:vard-rosa@mail.ru) // [orcid.org/0009-0009-7553-7797](https://orcid.org/0009-0009-7553-7797)

**Roza Pogos HOVHANNISYAN**: Researcher at Shirak

Center for Armenological Studies of NAS, Gyumri, RA,

e-mail: [vard-rosa@mail.ru](mailto:vard-rosa@mail.ru) // [orcid.org/0009-0009-7553-7797](https://orcid.org/0009-0009-7553-7797)

**Роза Погосовна ОГАННИСЯН**: научный сотрудник

Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА,

эл.адрес: [vard-rosa@mail.ru](mailto:vard-rosa@mail.ru) // [orcid.org/0009-0009-7553-7797](https://orcid.org/0009-0009-7553-7797)